ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  ԹԻՎ 57**

«29» հոկտեմբերի 2021թ.

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^{3}$-րդ հոդվածի 11-րդ կետով, առաջնորդվելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով և հիմք ընդունելով Սեդա Ցոլակի Մադանցյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 06-097-0127-0114 կադաստրային ծածկագրով, 0.02917 հա մակերեսով հողամասում անասնագոմ կառուցելու համար տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ավագանու քննարկմանը ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային, գյուղատնտեսական արտադրական հողերի գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությունը:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տալ Սարահարթ համայնք, 18-րդ փողոց, թիվ 6 փոստային հասցե:

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ 58

«01» նոյեմբերի 2021թ.

## ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագիծը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով – ՀՀ կառավարության 11.08.2005թ-ի թիվ 1613-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի վարչական սահմաններում գտնվող ՀՀ կառավարության 11.08.2005թ-ի թիվ 1613-Ն որոշման 7-րդ հավելվածով պետական սեփականություն հանդիսացող 06-097-0148-0001 ծածկագրից առանձնացված, «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծով 0.138819 հա անտառային նպատակային նշանակության անտառի նկատամամբ Հայաստանի Հանրապետության անվամբ կատարել պետական գրանցում:

Սարահարթ համայնքի ղեկավար Ա. Փիլոյան